Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվետվություն Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակված «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2023/2024»-ի հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 7

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 10

5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 13

6. ԱՄՓՈՓՈՒՄ 18

ՀԱՎԵԼՎԱԾ 20

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆԶԻ	անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս
ԲԱԻ	բազմաչափ աղքատության ինդեքս
ԳԱԻ	գենդերային անհավասարության ինդեքս
ԳԶԻ	գենդերային զարգացման ինդեքս
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՀԱԵ	համախառն ազգային եկամուտ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄՄՆԶԻ	մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս
ՄՆԶԶ	մարդկային ներուժի զարգացման զեկույց
ՄՆԶԻ	մարդկային ներուժի զարգացման ինդեքս
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կյանքի առաջընթացը չի կարող բացատրվել միայն զուտ տնտեսական գործոններով, և այս իմաստով առավել նպատակահարմար է մարդկային զարգացման հայեցակարգի կիրառումը, որը հիմնվում է կյանքի արժեքավոր պայմաններ ապահովելու նպատակով մարդկանց ազատությունների, հնարավորությունների և կարողությունների իրացման վրա և բացի զուտ տնտեսական ցուցանիշներից ներառում է նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են առողջությունը, կրթությունը, գենդերային հավասարությունը, քաղաքական մասնակցությունը, շրջակա միջավայրի կայունությունը և այլն: Հայեցակարգի հիմքում ընկած է այն գաղափարը, որ երկրի գլխավոր հարստությունը մարդիկ են, և, ըստ այդմ, կարևորագույն նշանակություն ունի, թե երկրում որքանո՞վ է երաշխավորված մարդկանց արժանապատիվ կյանքը:

Հայեցակարգի կիրառումը նպատակահարմար է նաև նրանով, որ այն հիմնվում է բավականաչափ ճշգրիտ և համընդհանուր ընդունված մեթոդաբանության վրա և հնարավոր է դարձնում այս ասպարեզում երկրների առաջընթացը չափելու և գնահատելու, ինչպես նաև միջժամանակային ու միջերկրային համեմատություններ կատարելու նպատակով հաշվարկների իրականացումը:

Հայեցակարգն առաջարկվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԿԶԾ) կողմից և հիմնվում է «մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՆԶԻ)» ցուցանիշի վրա: Ինդեքսը, ըստ էության, համապարփակ գնահատման գործիք է, որով «չափվում է» աշխարհի տարբեր երկրներում մարդկանց բարեկեցությունն ու առաջընթացը: ՄԱԿԶԾ-ն 1990 թվականից ի վեր հրապարակում է Մարդկային ներուժի զարգացման ամենամյա զեկույցներ, որոնց հիմքը կազմում է հենց այդ ցուցանիշը: Դրանք ամփոփ տեղեկատվություն են տալիս տարբեր երկրներում մարդկային ներուժի զարգացման վերաբերյալ: Ընդգծելով տարբեր երկրներում այս ասպարեզում առկա խնդիրներն ու միտումները՝ ՄՆԶԻ-ն հնարավորություն է տալիս շահագրգիռ կողմերին ձևավորելու ներառական աճի խթանմանը, անհավասարության նվազեցմանը և կյանքի որակի բարձրացմանը միտված նպատակային ռազմավարություններ: Այդ պատճառով, կարելի է ասել, որ Մարդկային ներուժի զարգացման զեկույցը տեղեկատվական հիմք է ծառայում քաղաքականություն մշակողների և իրականացնողների, ինչպես նաև ոլորտի հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար:

Օրերս հրապարակվել է շարքի «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2023/2024»-ը[1] (այսուհետ՝ Զեկույց)՝ *«Ելք փակուղուց. բևեռացված աշխարհում համագործակցության վերաիմաստավորումը»* խորագրով:

Զեկույցի խորագրի ընտրությունը պատահական չէ, քանի որ դրա հիմքում ընկած հիմնական հարցադրումն այդ մարտահրավերների պատճառով ստեղծված փակուղուց դուրս գալու հնարավորությունների վերհանումն է:

Ուշագրավ է, որ «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2023/2024»-ում ներկայացված են ՄՆԶԻ-ի 2022թ. տվյալները, իսկ 2023 թվականի համար պարզապես կատարված են որոշ երևույթների, գործընթացների ու ցուցանիշների կանխատեսումներ:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր նոր զեկույցում նաև վերանայվում և թարմացվում են նախորդ տարիների վերաբերյալ նախկինում հրապարակված տվյալները:

Ըստ Զեկույցի՝ 2022թ. համաշխարհային միջին ՄՆԶԻ-ին 0.739 միավոր է՝ 2021-ի 0.735 միավորի դիմաց:

Հայաստանի 2022 թվականի ՄՆԶԻ-ն կազմել է 0.786 միավոր, որը 2021-ի համապատասխան ցուցանիշից ավելի է 0.012 միավորով: Հայաստանը համաշխարհային վարկանիշային աղյուսակի 79-րդ հորիզոնականից տեղափոխվել է 76-րդ հորիզոնական: Ընդ որում, Հայաստանի 2021 թվականի և՛ ՄՆԶԻ-ն, և՛ վարկանիշային դիրքը նախորդ զեկույցի հրապարակումից հետո վերանայվել են (նախորդ զեկույցում Հայաստանը ՄՆԶԻ-ի 0.759 միավորով զբաղեցնում էր վարկանիշային աղյուսակի 85-րդ հորիզոնականը):

Կարևորելով զեկույցների շարքի դերը՝ «Լույս» հիմնադրամը, 2018-ից ի վեր, յուրաքանչյուր ամենամյա զեկույցի հրապարակումից հետո դրա վերաբերյալ կատարում է վերլուծություն[2]: Սույն հաշվետվության նպատակն է ամփոփ տեսքով ներկայացնել ՄՆԶԶ-2023/2024-ի՝ առավելապես ՀՀ-ին վերաբերող դրույթները:

Սույն հաշվետվությունում նախ ներկայացվել են մարդկային ներուժի զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև անդրադարձ է կատարված Զեկույցի՝ աշխարհին վերաբերող առավել ուշագրավ տեղեկատվությանը: Հաջորդ բաժինը նվիրված է Հայաստանում մարդկային ներուժի զարգացման առումով իրավիճակի

[1] https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2023-24reporten.pdf (այցելվել է 03.04.2024թ.):
[2] Բոլոր տարիների վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ https://www.luys.am/...:

վերլուծությանը: Հաջորդիվ կատարված են Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումներ: Այնուհետև ներկայացվել են մարդկային ներուժի զարգացման գնահատման համար կիրառվող մասնակի ինդեքսները: Վերջում հակիրճ շարադրվել են վերլուծության առավել կարևոր արդյունքներն ու եզրահանգումները:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄՆԶԻ-ն ագրեգացված ցուցանիշ է և հանդիսանում է երեք՝ *առողջության*, *կրթության* և *կենսամակարդակի* ենթաինդեքսների միջին երկրաչափական: Դրանցից առաջինի և վերջինի որոշման համար ստանդարտացվում[3] են համապատասխանաբար *կյանքի սպասվող տևողությունը* և շնչային *համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ)*: Իսկ կրթության ենթաինդեքսը հաշվարկելու համար նախ ստանդարտացվում են դրա երկու ցուցիչները՝ կրթության *սպասվող* և *միջին* տևողությունները, այնուհետև հաշվարկվում է ենթաինդեքսը՝ որպես այդ երկու ստանդարտացված արժեքների միջին թվաբանական: Կրթության սպասվող տևողությունը կրթական տարիների այն քանակն է, որն ակնկալվում է, որ անձը կծախսի կրթության վրա: Կրթության միջին տևողությունը 25 և ավելի տարեկան բնակչության կրթական տարիների միջին քանակն է:

[3] Ցուցանիշի ստանդարտացումն ընդունված հանրահաշվական ձևափոխություն է՝ $\frac{\text{փաստացի արժեք}-\text{նվազագույն արժեք}}{\text{առավելագույն արժեք}-\text{նվազագույն արժեք}}$, որի արդյունքում ստացվում է $[0,1]$ միջակայքին պատկանող ինդեքս: Այս ձևափոխությունը թույլ է տալիս տարբեր չափողականություն ունեցող ցուցանիշներից անցում կատարել նույն չափողականության, ինչը հնարավոր է դարձնում տարասեռ ցուցանիշների համադրումը:

Գծապատկեր 1. ՄՆԶԻ-ի կառուցման գործընթացը[4]



Համաձայն ՄՆԶԶ-ի մեթոդաբանության՝ ըստ մարդկային ներուժի զարգացման երկրները դասակարգվում են չորս խմբում՝ *շատ բարձր*, *բարձր*, *միջին* և *ցածր* մակարդակով երկրներ, եթե ՄՆԶԻ-ն պատկանում է համապատասխանաբար [0.800, 1.000], [0.700, 0.799], [0.550, 0.699] և [0.000, 0.549] միջակայքին:

Զեկույցի հիմքը, անկասկած, կազմում է ՄՆԶԻ-ն, սակայն, բացի այդ ինդեքսից, Զեկույցում օգտագործվում են նաև այլ ցուցանիշներ (մասնակի ինդեքսներ): Ստորև հակիրճ ներկայացվում է այդ ինդեքսներից յուրաքանչյուրի հաշվարկման մեթոդաբանությունը:

Քանի որ ՄՆԶԻ-ի հաշվարկման ընթացքում հաշվի չի առնվում մարդկանց միջև անհավասարության առկայությունը, այս բացը փորձ է արվում հաղթահարել *Անհավասարության հաշվառմամբ մարդկային ներուժի զարգացման ինդեքսով՝ (ԱՄՆԶԻ)*, որն իրենից ներկայացնում է ՄՆԶԻ-ի ենթաինդեքսների՝ անհավասարությամբ ճշգրտված արժեքների երկրաչափական միջինը: Ըստ էության, ԱՄՆԶԻ-ի արժեքը հավասար կլինի ՄՆԶԻ-ին, եթե մարդկանց միջև անհավասարություն չկա, իսկ որքան անհավասարությունը մեծ է, այնքան ԱՄՆԶԻ-ն փոքր է ՄՆԶԻ-ից:

Մարդկային ներուժի զարգացման վրա գենդերային անհավասարության ազդեցությունը չեզոքացնելու նպատակով ներմուծվել է *Գենդերային զարգացման*

[4] Աղբյուրը՝ ՄԱԶԾ պաշտոնական կայք՝ https://hdr.undp.org/data-center/human-development-index#/indicies/HDI (այցելվել է 03.04.2024թ.):

ինդեքսը (ԳԶԻ), որի հաշվարկման նպատակով կանանց և տղամարդկանց համար առանձին-առանձին գնահատվում է ՄՆԶԻ-ն, իսկ ԳԶԻ-ն հաշվարկվում է որպես դրանց հարաբերություն: Համարվում է, որ որքան ԳԶԻ-ն մոտ է 1-ին, այնքան մեծ է գենդերային հավասարությունը: Որպես մարդկային ներուժի ձեռքբերումներում կանանց և տղամարդկանց հավասարության չափանիշ է ծառայում ԳԶԻ-ի բացարձակ շեղումը 1 արժեքից, այսինքն՝ $100 \cdot |\text{ԳԶԻ} - 1|$ մեծությունը: Երկրում մարդկային ներուժի ձեռքբերումների առումով կանանց և տղամարդկանց հավասարությունը համարվում է *բարձր*, եթե այդ բացարձակ շեղումը չի գերազանցում 2.5%-ը: Երկիրը դասակարգվում է *միջինից բարձր* խմբում, եթե բացարձակ շեղումը $(2.5\%, 5\%]$ միջակայքում է, *միջին* խմբում՝ եթե $(5\%, 7.5\%]$ միջակայքում է, *միջինից ցածր* խմբում՝ $(7.5\%, 10\%]$ միջակայքի և *ցածր*՝ 10%-ը գերազանցող շեղման դեպքում:

Գենդերային անհավասարության ինդեքսը (ԳԱԻ) արտացոլում է գենդերային անհավասարության պատճառով վերարտադրողական առողջության, աշխատաշուկայի և կանանց իրավունքների ու հնարավորությունների սահմանափակությունների իմաստով առաջացող «կորուստները»: Ինդեքսի հաշվարկման կարգը բավական նման է ԱՄՆԶԻ-ի հաշվարկման կարգին: ԳԱԻ-ին արժեքներ է ընդունում [0, 1] միջակայքից: Ընդ որում, ԳԱԻ-ի 0 արժեքը համապատասխանում է գենդերային կատարյալ հավասարությանը, իսկ 1-ը՝ կատարյալ անհավասարությանը: ԳԱԻ-ի հաշվարկման համար օգտագործվում են հինգ ցուցանիշներ՝ <u>մայրական մահացության գործակից, դեռահասների ծնելիության մակարդակ, խորհրդարանում կանանց տեսակարար կշիռ, առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության տեսակարար կշիռ, աշխատուժի մասնակցության մակարդակ:</u>

Նկատի ունենալով շրջակա միջավայրի վրա մարդկության բացասական ազդեցությունը՝ ՄՆԶԶ-2020-ից սկսած ՄՆԶԶ-ում ներառվել է նաև *մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՄՆԶԻ)*, որը ՄՆԶԻ-ն ճշգրտում է՝ հաշվի առնելով այդ բացասական ազդեցությունը:

ՄՄՆԶԻ-ի հաշվարկման նպատակով, ի լրումն ՄՆԶԻ-ի հաշվարկման համար օգտագործվող ցուցանիշների, դիտարկվում է ևս երկու ցուցանիշ՝ *1 շնչի հաշվով ածխածնային արտանետումներ* և *1 շնչի հաշվով ռեսուրսների սպառում*: Դրանցից առաջինը արդյունաբերական գործընթացներում ածխի, նավթի, գազի այրման հետևանքով արտանետված ածխաթթու գազի զանգվածի հարաբերությունն է բնակչության միջին թվաքանակին, իսկ երկրորդը՝ վառելիքային, մետաղական, ոչ մետաղական ռեսուրսների անկայուն սպառման զանգվածի հարաբերությունը բնակչության միջին թվաքանակին: Բնականաբար, որքան ավելի մեծ են այս

ցուցանիշների արժեքները, այնքան ավելի մեծ չափով է խախտված շրջակա միջավայրի կայունությունը:

Ինդեքսի հաշվարկն իրականացվում է երեք քայլով: Նախ՝ լրացուցիչ դիտարկվող վերոհիշյալ երկու ցուցանիշները ստանդարտացվում են: Այնուհետև հաշվարկվում է ճշգրտման գործակիցը՝ որպես ստանդարտացված ցուցանիշների միջին թվաբանական: Վերջին քայլով կատարվում է ՄՆԶԻ-ի ճշգրտում՝

ՄՄՆԶԻ = ՄՆԶԻ · (1 – ճշգրտման գործակից)

բանաձևով:

Բանաձևից երևում է, որ որքան մեծ է ածխածնային արտանետումների և ռեսուրսների անկայուն սպառման ծավալը, այնքան ՄՄՆԶԻ-ն ՄՆԶԻ-ից ավելի փոքր է ստացվում:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ինչպես և վերջին մի քանի զեկույցներում, այս Զեկույցում նույնպես բազմիցս խոսվում է ծգձգվող աշխարհաքաղաքական հակամարտությունների մասին՝ դրանք մեկնաբանելով որպես պետությունների միջև ուժերի հարաբերակցության փոփոխության, ինչպես նաև անհավասարության, անապահովության ու բևեռացման պատճառով որոշ դեպքերում ազգային ինքնագիտակցության ծայրահեղ դրսևորումների հետևանք: Սակայն միաժամանակ նշվում է, որ դա չի նշանակում, թե մարդկությունը պետք է հանդուրժի, որ աշխարհաքաղաքականությունը պատրվակ լինի փակուղում մնալու համար:

Զեկույցում մասնավորապես նշվում է, որ, չնայած առկա մարտահրավերներին, աշխարհը կարող է «ավելի լավը» լինել և հաղթահարել կլիմայի արագ փոփոխությունն ու համաճարակը, համաշխարհային պոպուլիզմի ֆոնին աճող հակասահմանադրական հեղաշրջումների ալիքը, մարդու իրավունքների ոտնահարումներն ու ցինիկ սպանությունների անվերջանալի շղթան: Այս լավատեսությունը Զեկույցում հիմնավորվում է նրանով, որ զարգացման արդի փուլում մարդկության հնարավորությունները երբևիցե ամենամեծն են, ներկայիս սերունդն ունի մարդկության պատմության մեջ աննախադեպ գիտելիքների մակարդակ, գիտի, թե ինչ գլոբալ խնդիրների է բախվում մարդկությունը, և դրանք առավելապես հասարակության որ շերտերի վրա են ազդելու: Միաժամանակ, Զեկույցում չի ժխտվում, որ առկա լուրջ մարտահրավերները զգալիորեն խոչընդոտում են մարդկության առջև դրված նպատակների իրագործմանը:

Նշվում է, որ մարդկային ներուժի զարգացման ինդեքսի (ՄՆԶԻ) համաշխարհային միջին արժեքը, որը համավարակի պատճառով զեկույցների պատմության մեջ առաջին անգամ երկու տարի անընդմեջ՝ 2020 և 2021 թվականներին նվազել էր՝ զրոյացնելով նախորդ հինգ տարիների աճը, հաջորդող տարիներին ունեցել է շարունակական աճ, և ակնկալվում է, որ 2023 թվականին այն կհասնի ռեկորդային բարձր մակարդակի (Գծապատկեր 2), իսկ դրա բոլոր բաղադրիչները կգերազանցեն մինչև 2019թ. արձանագրված արժեքները: Այնուամենայնիվ, չնայած դրան, մարդկային ներուժի զարգացման ներկայիս մակարդակը դեռևս չի վերադարձել նախկինում կանխատեսված հետագծին:

Գծապատկեր 2. Մարդկային ներուժի զարգացման համաշխարհային ինդեքսի դինամիկան



Բացի այդ, լուրջ խնդիր է համարվում նաև այն, որ, չնայած 2023թ. արդյունքներով ՄՆԶԻ-ի միջին արժեքը կգերազանցի 2019-ի նախաքովիդյան արժեքին, այնուամենայնիվ լիակատար վերականգնում կարձանագրվի ոչ բոլոր երկրներում: Այսպես, ակնկալվում է, որ ՏՀԶԿ-ի անդամ բոլոր երկրներն ամբողջությամբ կվերականգնվեն, մինչդեռ, թույլ զարգացած երկրների միայն մոտավորապես կեսը կվերականգնվի (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Ըստ ՄՆԶԻ-ի 2023թ. կանխատեսվող վերականգնումը՝ 2020-2021 թվականների նահանջից հետո, %



Ի դեպ, երկրների միջև ըստ ՄՆԶԻ-ի անհավասարությունը 20 տարվա կայուն նվազումից հետո 2020 թվականից ի վեր աճում է, և այն տարեցտարի գնալով խորանում է (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Երկրների միջև ըստ ՄՆԶԻ-ի անհավասարությունը



Զեկույցում խոսվում է այսպես կոչված «ժողովրդավարության պարադոքսի» մասին, համաձայն որի՝ չնայած հարցումները ցույց են տալիս, որ 10 հոգուց 9-ն անվերապահորեն աջակցում են ժողովրդավարությանը, այնուամենայնիվ, տարօրինակ է, որ կատարված դիտարկումների սկզբից ի վեր առաջին անգամ աշխարհի բնակչության կեսից ավելին աջակցում է այնպիսի առաջնորդներին, որոնք կարող են խաթարել ժողովրդավարությունը:

Ըստ Զեկույցի՝ ՄՆԶԻ-ի համաշխարհային արժեքը 0.739 միավոր է՝ 2021-ի 0.735 միավորի դիմաց:

Աշխարհում մարդկային ներուժի զարգացման առումով 193 երկրների շարքում առաջատարը Շվեյցարիան է (0.967 միավոր), որին հաջորդում են Նորվեգիան (0.966 միավոր), Իսլանդիան (0.959 միավոր) և Հոնկոնգը (0.956 միավոր): Դանիան և Շվեդիան 0.952 միավորով կիսում են հինգերորդ հորիզոնականը: Վարկանիշային աղյուսակի վերջին հորիզոնականում Սոմալին է (0.380 միավոր): Վատագույն ինգյակի մյուս բոլոր երկրները ևս աֆրիկյան մայրցամաքից են՝ Չադ (0.394 միավոր), Նիգեր (0.394 միավոր), Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն (0.387 միավոր) և Հարավային Սուդան (0.381 միավոր):

Ստորև ներկայացվում են մարդկային ներուժի զարգացման առանձին ցուցիչների գծով լավագույն և վատագույն արդյունքները:

Կյանքի ամենաերկար *սպասվող տևողությամբ* երկրներն են Մոնակոն (86.9 տարի) և Ճապոնիան (84.8 տարի): Մյուս կողմից, կյանքի ամենակարճ սպասվող տևողությունը Լեսոտոյում և Չադում է՝ ընդամենը 53.0 տարի:

Կրթության սպասվող տևողությամբ առաջին տեղում Ավստրալիան է՝ 21.1 տարի: Վերջին տեղում Հարավային Սուդանն է՝ 5.6 տարի:

Կրթության միջին տևողությամբ առաջատարը Գերմանիան է՝ 14.3 տարի: Երկրորդ տեղում Շվեյցարիան է՝ 13.9 տարի: Այս ցուցանիշով հետնապահ 10 երկրներում կրթության միջին տևողությունը չի գերազանցում նույնիսկ երեք տարին (Սենեգալ, Եմեն, Աֆղանստան, Եթովպիա, Գվինեա, Բուրկինա Ֆասո, Չադ, Սոմալի, Մալի և Նիգեր):

Ամենաբարձր *կենսամակարդակը* 2022 թվականի դրությամբ Լիխտեյնշտայնում է, որտեղ շնչային ՀԱԵ-ն 146,673 PPP դոլար է: Հետնապահը Հարավային Սուդանն է՝ 691 PPP դոլար շնչային եկամտով: Փաստորեն ամենաբարձր ՀԱԵ-ով երկրում այն ավելի քան 212 անգամ գերազանցում է ամենացածր շնչային ՀԱԵ-ով երկրի ցուցանիշին:

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2022թ. արդյունքներով ՀՀ ՄՆԶԻ-ն կազմում է 0.786, որը նախորդ տարվա ցուցանիշից բարձր է 0.012 միավորով (1.6%-ով): Ըստ ՄՆԶԻ-ի կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 3 հորիզոնականով բարելավել է իր դիրքը և 193 երկրների թվում 76-րդն է՝ շարունակելով ընդգրկված լինել մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների խմբում: Ի դեպ, Հայաստանի ինչպես ՄՆԶԻ-ն, այնպես էլ վարկանիշային դիրքը նախորդ զեկույցի հրապարակումից հետո վերանայվել են (երկուսն էլ բարելավման ուղղությամբ). նախորդ զեկույցում Հայաստանը ՄՆԶԻ-ի 0.759 միավորով զբաղեցնում էր վարկանիշային աղյուսակի 85-րդ հորիզոնականը:

Մարդկային ներուժի զարգացման տեսանկյունից ՀՀ դիրքերն առաջին զեկույցի հրապարակումից ի վեր, զգալիորեն բարելավվել են. 1990 թվականին Հայաստանը 0.658 միավոր ՄՆԶԻ-ով համարվում էր մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ ունեցող երկիր:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Հայաստանի ՄՆԶԻ-ն դեռևս չի հասել 2019թ. մակարդակին: Ի դեպ, 2019 թվականի ՄՆԶԻ-ն վերանայվել է և՛ «ՄՆԶԶ-2021/2022»-ում, և՛ «ՄՆԶԶ-2023/2024»-ում. համաձայն «ՄՆԶԶ-2020»-ի 2019թ. ՄՆԶԻ-ն 0.776 էր, «ՄՆԶԶ-2021/2022»-ում այն դարձել է 0.778, իսկ «ՄՆԶԶ-2023/2024»-ում՝ 0.789 միավոր:

Հարկ է նշել, որ Հայաստանի 2022թ. ՄՆԶԻ-ի առողջության և կենսամակարդակի բաղադրիչներում 2021-ի համեմատ բարելավում է արձանագրվել: Այսպես, կյանքի սպասվող տևողությունը 72.0 տարվանից աճել է մինչև 73.4 (2019-ին այն 75.1 տարի էր), իսկ շնչային ՀԱԵ-ն աճել է 1,574 PPP դոլարով[5] կամ 11.4%-ով: **Կյանքի սպասվող տևողության աճը, մասնավորապես, պայմանավորված է նրանով, որ 2020 և 2021 թվականներին ռազմական գործողությունների և կորոնավիրուսային համավարակի պատճառով երիտասարդ տարիքի բնակչության մահացության ցուցանիշն աճել էր, իսկ 2022-ին այդ տարիների համեմատ էապես նվազել էր (սակայն, միևնույն է, ընդհանուր մահացության ցուցանիշը դեռևս բարձր է մնում 2019-ի մակարդակից): Կյանքի սպասվող տևողությունը 2020 և 2021 թվականների նվազումից հետո 2022-ին գրանցել է որոշակի աճ (սակայն, ինչպես նշվեց, դեռևս 1.7 տարով զիջում է 2019-ի ցուցանիշին): Շնչային ՀԱԵ-ի աճի մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ 2022 թվականին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին տարեկան արժևորումը կազմել է 15.6%:** Կրթության բաղադրիչի երկու ցուցանիշներն էլ չեն փոփոխվել:

Գծապատկեր 5. ՀՀ ՄՆԶԻ-ի դինամիկան



Հայաստանի և սահմանակից երկրների 2022 թվականի ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

[5] ԱՄՆ դոլարով արտահայտված փաստացի շնչային ՀԱԵ-ի փոխարեն ներկայացված է գնողունակության համարժեքությամբ «կշռված» շնչային ՀԱԵ-ի ցուցանիշը, որը ստացվում է փաստացի արժեքը միջազգային դոլարի (ըստ գնողունակության համարժեքության և 2017թ. հաստատուն գների) փոխարկելով:

Աղյուսակ 1. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում և տարածաշրջանի մյուս երկրներում 2022թ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	Շնչային ՀԱԵ, (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
Հայաստան	***73.4***	***14.4***	***11.3***	***15,388***	***0.786***
Իրան	74.6	14.1	10.7	14,770	0.780
Թուրքիա	78.5	19.7	8.8	32,834	0.855
Վրաստան	71.6	16.7	12.7	15,952	0.814
Ադրբեջան	73.5	12.7	10.6	15,018	0.760

Աղյուսակից երևում է, որ ՄՆԶԻ-ով Հայաստանը տարածաշրջանի հինգ երկրների թվում 3-րդն է՝ Թուրքիայից (0.855 միավոր, 45-րդ հորիզոնական) և Վրաստանից (0.814 միավոր, 60-րդ հորիզոնական) հետո: 4-րդ տեղում Իրանն է (0.780 միավոր, 78-րդ հորիզոնական): Տարածաշրջանում վերջինն Ադրբեջանն է (0.760 միավոր, 89-րդ հորիզոնական):

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, որ Հայաստանը կրթության միջին տևողությամբ տարածաշրջանում երկրորդն է և զիջում է միայն Վրաստանին: Սակայն կրթության սպասվող տևողության ցուցանիշով զիջում է նաև Թուրքիային: Տարածաշրջանի բոլոր հինգ երկրներում էլ 2021-ի համեմատ 2022-ին արձանագրվել է շնչային ՀԱԵ-ի աճ: Այնուամենայնիվ, Հայաստանի դեպքում այդ աճն ավելի էական է եղել և շնչային ՀԱԵ-ի ցուցանիշով մեր երկիրն առաջ է անցել Ադրբեջանից և տարածաշրջանում երրորդն է՝ Թուրքիայից և Վրաստանից հետո: Ինչպես վերը նշվեց, Հայաստանի դեպքում շնչային ՀԱԵ-ի աճը մեծ չափով պայմանավորված է դրամի արժևորմամբ:

2022 թվականի ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, տարբեր տարածաշրջաններում և երկրների խմբերում ներկայացված են Աղյուսակ 2-ում: Աղյուսակից երևում է, որ ՄՆԶԻ-ով Հայաստանը 0.022 միավորով գերազանցում է «Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի (որում ներառված է) միջին ցուցանիշին, 0.092 միավորով՝ զարգացող երկրների միջինին և 0.047 միավորով՝ աշխարհի միջինին: Ընդ որում, զարգացող երկրների միջին ցուցանիշներին Հայաստանի ցուցանիշները գերազանցում են մարդկային ներուժի զարգացման բոլոր բաղադրիչների գծով: «Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի միջինին Հայաստանը գերազանցում է միայն կրթության միջին տևողության գծով (2.7 տարով): **Այսինքն՝ ՄՆԶԻ-ով այդ խմբի միջինին գերազանցումը բացառապես այդ բաղադրիչի շնորհիվ է:** Աշխարհի միջինին Հայաստանը զիջում է միայն շնչային ՀԱԵ-ով (1,866 PPP դոլարով կամ 10.8%-ով): **Այսինքն՝ աշխարհի միջին ՄՆԶԻ-ին Հայաստանի ցուցանիշը գերազանցում է ոչ տնտեսական բաղադրիչների շնորհիվ:**

Աղյուսակ 2. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, տարբեր տարածաշրջաններում և երկրների խմբերում 2022թ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	Շնչային ՀԱԵ, (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
Հայաստան	***73.4***	***14.4***	***11.3***	***15,388***	***0.786***
Եվրոպա և Կենտրոնական Ասիա (միջին)	73.6	15.5	10.6	19,763	0.802
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան երկրներ (միջին)	76.2	14.5	8.2	16,138	0.766
Հարավային Ասիա (միջին)	68.4	11.9	6.6	6,972	0.641
Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ (միջին)	73.7	14.8	9.0	15,109	0.763
Ենթասահարական Աֆրիկա (միջին)	60.6	10.3	6.0	3,666	0.549
Արաբական երկրներ (միջին)	71.3	11.9	7.8	14,391	0.704
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	*75.2*	*14.5*	*8.6*	*15,484*	*0.764*
Թույլ զարգացած երկրներ (միջին)	64.9	10.1	5.0	3,006	0.542
Զարգացող երկրներ (միջին)	*70.5*	*12.5*	*7.6*	*11,125*	*0.694*
Զարգացած երկրներ (միջին)	80.1	16.6	12.2	46,318	0.906
Աշխարհ (միջին)	*72.0*	*13.0*	*8.7*	*17,254*	*0.739*

Հետխորհրդային և մյուս անցումային երկրների ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ներկայացված են կցված Հավելվածում:

5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մարդկային ներուժի զարգացման առումով սոցիալական և գենդերային անհավասարության, էկոհամակարգի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունների, ինչպես նաև աղքատության պատճառած սոցիալական կորուստները հաշվի առնելու նպատակով, բացի ՄՆԶԻ-ից, ՄՆԶԶ-ներում ներառվում են նաև մի քանի առավել մանրամասնած (մասնակի) ինդեքսներ: Մասնավորապես, սոցիալական անհավասարության կորուստները հաշվի առնելու նպատակով ներմուծվել է *անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս* (ԱՄՆԶԻ) ցուցանիշը: Գենդերային անհավասարության պատճառով առաջացող կորուստները հաշվի են առնվում *գենդերային զարգացման ինդեքս* (ԳԶԻ) և *գենդերային անհավասարության ինդեքս* (ԳԱԻ) ցուցանիշներում: Էկոհամակարգի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունները հաշվի են առնվում *մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսում* (ՄՄՆԶԻ):

3-րդից 6-րդ աղյուսակներում ներկայացված է վերոհիշյալ մասնակի ինդեքսներից յուրաքանչյուրին առնչվող տեղեկատվությունը: Աղյուսակներում ներառված են նաև «Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» և զարգացող երկրների խմբերի, ինչպես նաև աշխարհի միջին արժեքների վերաբերյալ տվյալները:

Աղյուսակ 3. ՄՆԶԻ-ն և ԱՄՆԶԻ-ն 2022թ.

	ՄՆԶԻ	ԱՄՆԶԻ	Կորուստը, %
Հայաստան	**0.786**	**0.721**	**8.3**
Իրան	0.780	0.584	25.1
Թուրքիա	0.855	0.717	16.1
Վրաստան	0.814	0.728	10.6
Ադրբեջան	0.760	0.707	7.0
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.764	0.628	17.8
Զարգացող երկրներ (միջին)	0.694	0.524	24.5
Աշխարհ (միջին)	0.739	0.576	22.1

Հայաստանի 2022թ. ԱՄՆԶԻ-ն կազմել է 0.721 միավոր, այսինքն՝ շուրջ 8.3%-ով պակաս, քան ՄՆԶԻ-ն: Այսինքն՝ համաձայն Զեկույցի՝ ՀՀ-ում սոցիալական անհավասարության զսպող ազդեցությունը մարդկային ներուժի զարգացման վրա 8.3% է: Աղյուսակ 3-ից երևում է, որ մեր հարևան երկրներից Իրանում, Թուրքիայում և Վրաստանում անհավասարության պատճառով ինդեքսի կորուստն ավելի մեծ է, քան Հայաստանում: Դրա հիմնական բացատրությունն այն է, որ **Հայաստանում առողջապահական և կրթական ծառայությունների համեմատաբար հասանելի լինելը մասամբ մեղմացնում է սոցիալական անհավասարության պատճառած կորուստները:** Աղյուսակից նաև երևում է, որ Հայաստանի ԱՄՆԶԻ-ի ցուցանիշը ևս գերազանցում է թե՛ «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի, թե՛ զարգացող երկրների և թե՝ աշխարհի միջին արժեքներին:

Աղյուսակ 4. ՄՆԶԻ-ն և ԳԶԻ-ն 2022թ.

	ՄՆԶԻ		ԳԶԻ	
	իգական	արական	արժեք	խումբ
Հայաստան	**0.795**	**0.775**	**1.026**	**միջինից բարձր**
Իրան	0.710	0.806	0.880	ցածր
Թուրքիա	0.825	0.876	0.941	միջին
Վրաստան	0.815	0.811	1.005	բարձր
Ադրբեջան	0.743	0.773	0.961	միջինից բարձր
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.747	0.777	0.962	-
Զարգացող երկրներ (միջին)	0.665	0.716	0.929	-
Աշխարհ (միջին)	0.719	0.756	0.951	-

Հայաստանի ԳԶԻ-ն 2022 թվականին կազմել է 1.026, որի շեղումը կատարյալ գենդերային հավասարությանը համապատասխանող 1 արժեքից կազմում է 2.6%: **Շեղման առավելագույն թույլատրելի շեմը գերազանցելու պատճառով Հայաստանը դուրս է մնացել *բարձր* ԳԶԻ-ով երկրների խմբից և հայտնվել *միջինից բարձր* ԳԶԻ-ով երկրների խմբում: Ի դեպ, Հայաստանը երբևիցե ընդգրկված չի եղել դրանից ավելի ցածր խմբում, իսկ այդ խմբում մեր երկիրը վերջին անգամ ընդգրկված է եղել 2006 թվականին:**

Ուշագրավ է նաև, որ, ի տարբերություն թե՛ բոլոր տարածաշրջանների, թե՛ բոլոր խմբերի և թե՛ աշխարհի միջին ԳԶԻ-ի, Հայաստանի ԳԶԻ-ն 1-ից մեծ է, այսինքն, ստացվում է, որ գենդերային զարգացման առումով կանայք ավելի նախընտրելի իրավիճակում են գտնվում, քան տղամարդիկ: Սա մի կողմից ուրախալի փաստ է, մյուս կողմից մտահոգության առիթ է տալիս, քանի որ կարող է վկայել այն մասին, որ, որքան էլ տարօրինակ հնչի, միգուցե այլևս տղամարդկանց իրավունքների «պաշտպանության» գործուն քայլերի կարիք կա (2021-ին ԳԶԻ-ի շեղումն ընդամենը 0.1% էր, իսկ ընդամենը մեկ տարի անց արդեն 2.6%):

Չնայած նահանջին, այնուամենայնիվ, Հայաստանում ԳԶԻ-ի առումով իրավիճակը հարևանների համեմատ մնում է բավական գոհացուցիչ. այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն Վրաստանին:

Աղյուսակ 5. ԳԱԻ-ն և դրա բաղադրիչները 2022թ.

	ԳԱԻ		Մայրական մահացության գործակից	Դեռահասների ծնելիության մակարդակ	Կանանց տեսակարար կշիռը խորհրդարանում, %	Առնվազն որոշակի միջնակարգ կրթությամբ բնակչության տեսակարար կշիռը, %		Աշխատուժի մասնակցության մակարդակ, %	
	արժեք	հորիզոնական				իգական	արական	իգական	արական
Հայաստան	**0.198**	**50**	**27**	**18.3**	**35.5**	**96.0**	**97.1**	**62.8**	**71.8**
Իրան	0.484	121	22	29.7	5.6	73.1	77.3	13.6	67.5
Թուրքիա	0.259	63	17	15.7	17.4	59.1	78.1	35.1	71.4
Վրաստան	0.283	69	28	29.7	19.0	98.2	98.7	55.5	73.5
Ադրբեջան	0.329	77	41	40.1	18.3	93.6	97.6	61.9	69.6
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.339	-	65	28.7	26.0	74.0	78.4	49.8	74.2
Զարգացող երկրներ (միջին)	0.485	-	235	45.9	24.3	56.8	65.4	44.9	75.3
Աշխարհ (միջին)	0.462	-	215	41.9	26.2	64.1	71.0	46.8	73.9

Աղյուսակ 5-ից երևում է, որ Հայաստանում գենդերային անհավասարությունը ամենացածրն է տարածաշրջանում: Ընդ որում, ԳԱԻ-ն 2021-ի համեմատ նվազել է

0.018 միավորով: **Նկատի ունենալով, որ ԳԱԻ-ի բաղադրիչներից տարվա ընթացքում էական փոփոխություններ է կրել միայն «աշխատուժի մասնակցության մակարդակը», կարելի է ասել, որ, ամենայն հավանականությամբ, այս բարելավումը հիմնականում պայմանավորված է արտաքին դրական գործոնների ազդեցությամբ 2022 թվականին արձանագրված կառուցվածքային տեղաշարժերի պատճառով իգական սեռի անձանց աշխատատեղերի զգալի աճով (հիմնականում ծառայությունների և առևտրի ոլորտներում):**

Հարկ է նաև նշել, որ Հայաստանում ցածր ԳԱԻ-ի ձևավորմանը նպաստող հիմնական գործոնները կանանց՝ քաղաքական գործընթացներում ներգրավվածության և ընդհանուր կրթվածության համեմատաբար բարձր մակարդակներն են:

Ինչպես վերը նշվեց, ՄՄՆԶԻ-ի կառուցվածքը նույնն է, ինչ ԱՄՆԶ-ինը: Ընդ որում, մոլորակային կայունության լիակատար պահպանման պարագայում այն հավասար կլիներ ՄՆԶԻ-ին, իսկ էկոհամակարգի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունները նվազեցնում են ՄՄՆԶԻ-ն: Այսինքն՝ որքան ՄՄՆԶԻ-ն ավելի փոքր է ՄՆԶԻ-ից, այնքան ավելի մեծ է էկոհամակարգի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունը:

Աղյուսակ 6. ՄՄՆԶԻ-ն 2022թ.

	ՄՆԶԻ	ՄՄՆԶԻ	Կորուստը, %	Ածխածնային արտանե-տումներ, շնչային (տոննա)	Ռեսուրսների սպառում, շնչային (տոննա)
Հայաստան	**0.786**	**0.752**	**4.3**	**2.5**	**7.4**
Իրան	0.780	0.715	8.3	7.8	8.9
Թուրքիա	0.855	0.783	8.4	5.3	13.8
Վրաստան	0.814	0.767	5.8	2.9	10.9
Ադրբեջան	0.760	0.719	5.4	3.7	8.3
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.764	0.691	9.6	5.5	16.9
Զարգացող երկրներ (միջին)	0.694	0.652	6.1	3.5	10.6
Աշխարհ (միջին)	0.739	0.685	7.3	4.5	12.5

Աղյուսակ 6-ից երևում է, որ Հայաստանի 2022-ի ՄՄՆԶԻ-ն՝ 0.752 միավոր, 4.3%-ով պակաս է եղել ՄՆԶԻ-ից: Ընդ որում, ինչպես և 2021-ին, 2022թ. ևս Հայաստանի՝ մոլորակային կայունության խախտմամբ պայմանավորված կորուստն ամենափոքրն է տարածաշրջանում: ՄՄՆԶԻ-ով դասակարգման

դեպքում ևս տարածաշրջանի երկրները կդասավորվեն նույն հաջորդականությամբ, ինչ ըստ ՄՆԶԻ-ի դասակարգման դեպքում:

Հարկ է նշել, որ մոլորակային կայունության բաղադրիչների մասով Հայաստանի ցուցանիշները բավական բարենպաստ են՝ թե՛ ածխածնային արտանետումների և թե՛ անկայուն սպառման ծավալի շնչային ցուցանիշներն ավելի ցածր են, քան տարածաշրջանի մյուս երկրներում: Այնուամենայնիվ, չնայած ընդհանուր առմամբ երևույթի դրական լինելու հանգամանքին, այս փաստը կարող է նաև մտահոգության տեղիք տալ, քանի որ հնարավոր է, որ դա տնտեսապես ավելի թույլ զարգացածության հետևանք է:

Հայաստանի ՄՄՆԶԻ-ին գերազանցում է թե՛ «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի, թե՛ զարգացող երկրների և թե' համաշխարհային միջինին: Այդ հանգամանքի հիման վրա, թերևս, կարելի է եզրակացնել, որ շրջակա միջավայրի կայունությանը սպառնացող ռիսկերի ազդեցությունը ՀՀ մարդկային ներուժի զարգացման գործընթացի վրա բավական թույլ է:

Գծապատկեր 6. ՀՀ մարդկային ներուժի զարգացման ցուցանիշների համադրումը երկրների տարբեր խմբերի և աշխարհի միջինների հետ, 2022թ.



Գծապատկեր 6-ից երևում է, որ թե՛ ՄՆԶԻ-ի և թե՛ մասնակի ինդեքսների՝ ԱՄՆԶԻ-ի, ՄՄՆԶԻ-ի, ԳԶԻ-ի և ԳԱԻ-ի առումով Հայաստանում «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» և զարգացող երկրների խմբերի, ինչպես նաև աշխարհի միջինի համեմատ վիճակն ավելի բարվոք է:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

• **Հայաստանը մարդկային ներուժի զարգացման 0.786 ինդեքսով ընդգրկված է «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբում**՝ ըստ «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2023/2024»-ի: 2022թ. արդյունքներով ՀՀ ինդեքսը նախորդ տարվա ցուցանիշից բարձրացել է 0.012 միավորով (1.6%-ով), իսկ համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 3 հորիզոնականով բարելավել է իր դիրքը՝ 193 երկրների թվում զբաղեցնելով 76-րդ հորիզոնականը: **Չնայած 2022թ. արձանագրված աճին, Հայաստանի ՄՆԶԻ-ն դեռևս ցածր է 2019թ. մակարդակից:**

• **Հայաստանի ՄՆԶԻ-ի աճն ապահովվել է կենսամակարդակի և առողջության ենթաինդեքսների հաշվին:** Մասնավորապես, շնչային ՀԱԵ-ն աճել է 11.4%-ով, իսկ կյանքի սպասվող տևողությունը 2021-ի համեմատ աճել է 1.4 տարով և կազմել 73.4 տարի: **Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ շնչային ՀԱԵ-ի (որը չափվում է ԱՄՆ դոլարով՝ ճշտված գնողունակության համարժեքությամբ) աճը մեծ չափով պայմանավորված է 2021-ի համեմատ 2022-ի ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի միջին տարեկան փոխարժեքի 15.6% աճով:**

Կյանքի սպասվող տևողության աճը, մասնավորապես, պայմանավորված է նրանով, որ 2020 և 2021 թվականներին ռազմական գործողությունների և կորոնավիրուսային համավարակի պատճառով մահվան դեպքերի թիվն ավելացել էր, իսկ 2022-ին այդ պատճառներով մահվան դեպքերի նվազումը նպաստել է կյանքի սպասվող տևողության աճին: Ի դեպ, միևնույն է, մահվան դեպքերի ընդհանուր թիվը դեռևս բարձր է մնում 2019-ի մակարդակից, և, թերևս, դա է հիմնական պատճառը, որ կյանքի սպասվող տևողությունը, չնայած 2022-ին արձանագրված աճին, դեռևս 1.7 տարով զիջում է 2019-ի ցուցանիշին:

• Հայաստանը ՄՆԶԻ-ի ցուցանիշով տարածաշրջանի հինգ երկրների թվում երրորդն է՝ գերազանցելով Ադրբեջանին և Իրանին:

• ԱՄՆԶԻ-ի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի հինգ երկրներից զիջում է միայն Վրաստանին: Համաձայն Զեկույցի՝ ՀՀ-ում սոցիալական անհավասարության զսպող ազդեցությունը մարդկային ներուժի զարգացման վրա 8.3% է, որից ավելի փոքր կորուստ արձանագրվել է միայն Ադրբեջանում: **Հայաստանում անհավասարության պատճառով տոկոսային կորստի ցածր լինելը բացատրվում է նրանով, որ առողջապահական և կրթական ծառայությունների համեմատաբար հասանելի լինելը մասամբ մեղմացնում է սոցիալական անհավասարության պատճառած կորուստները:**

• **ԳԶԻ-ի գծով Հայաստանը նահանջ է արձանագրել՝ շեղման առավելագույն թույլատրելի շեմը գերազանցելու պատճառով *բարձր* ԳԶԻ-ով**

երկրների խմբից տեղափոխվելով *միջինից բարձր* ԳՀԻ-ով երկրների խումբ, որում մեր երկիրը վերջին անգամ ընդգրկված է եղել 2006 թվականին:

Ուշագրավ է, որ, ի տարբերություն թե՛ բոլոր տարածաշրջանների, թե՛ բոլոր խմբերի և թե՛ աշխարհի միջին ԳՀԻ-ի, Հայաստանի ԳՀԻ-ին 1-ից մեծ է: Ստացվում է, որ գենդերային զարգացման առումով Հայաստանում կանայք ավելի նախընտրելի իրավիճակում են գտնվում, քան տղամարդիկ:

ԳՀԻ-ով Հայաստանը տարածաշրջանում զիջում է միայն Վրաստանին:

• Հայաստանի ԳԱԻ-ն նախորդ տարվա համեմատ նվազել է 0.018 միավորով (8.3%-ով): **Քանի որ 2022թ. ընթացքում ԳԱԻ-ի բաղադրիչներից էական փոփոխություն կրել է միայն «աշխատուժի մասնակցության մակարդակը», ամենայն հավանականությամբ, այս բարելավումը հիմնականում պայմանավորված է արտածին դրական գործոնների ազդեցությամբ 2022 թվականին արձանագրված տնտեսական աշխուժացման հետևանքով կանանց աշխատատեղերի զգալի աճով (հիմնականում ծառայությունների և առևտրի ոլորտներում):**

ԳԱԻ-ի ցուցանիշով Հայաստանը 2022թ. արդյունքներով տարածաշրջանի առաջատարն է: **Դրան նպաստող հիմնական գործոնները կանանց՝ քաղաքական գործընթացներում ներգրավվածության և ընդհանուր կրթվածության համեմատաբար բարձր մակարդակներն են:**

• ՄՄՆԶԻ-ի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում Թուրքիայից և Վրաստանից հետո երրորդն է: Մոլորակային կայունության առումով Հայաստանի վիճակը բավական բարենպաստ է, քանի որ և՛ ածխածնային արտանետումների և՛ անկայուն սպառման ծավալի շնչային ցուցանիշներն ամենացածրն են տարածաշրջանում: Այնուամենայնիվ, այս փաստն ունի նաև մտահոգիչ կողմ, քանի որ կարող է տնտեսապես ավելի թույլ զարգացածության հետևանք լինել:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում

ՄՆԶԻ-ի հորիզոնական (2022թ.)	Երկիր	Մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՆԶԻ) (2022թ.)	Կյանքի սպասվող տևողությունը, տարի	Կրթության սպասվող տևողությունը, տարի	Կրթության միջին տևողությունը, տարի	Համախառն ազգային եկամուտ (ՀԱԵ) 1 շնչի հաշվով, PPP դոլար	ՄՆԶԻ-ի հորիզոնական (2021թ.)	ՄՆԶԻ-ի հորիզոնականի փոփոխությունը 2021թ. համեմատ, +՝ բարելավում, -՝ վատթարացում, 0՝ անփոփոխ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՏ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ								
22	Սլովենիա	0.926	82.1	17.4	12.9	41,587	24	2
31	Էստոնիա	0.899	79.2	15.9	13.5	37,152	32	1
32	Չեխիա	0.895	78.1	16.3	12.9	39,945	31	-1
36	Լեհաստան	0.881	77.0	15.9	13.2	35,151	35	-1
37	Լատվիա	0.879	75.9	16.6	13.3	32,083	39	2
37	Լիտվա	0.879	74.3	16.4	13.5	38,131	36	-1
39	Խորվաթիա	0.878	79.2	15.6	12.3	34,324	37	-2
45	Սլովակիա	0.855	75.3	14.7	13.0	32,171	45	0
47	Հունգարիա	0.851	75.0	15.1	12.2	34,196	46	-1
50	Մոնտենեգրո	0.844	76.8	15.1	12.6	22,513	49	-1
53	Ռումինիա	0.827	74.1	14.5	11.4	31,641	52	-1
56	Ռուսաստանի Դաշնություն	0.821	70.1	15.7	12.4	26,992	55	-1
60	Վրաստան	0.814	71.6	16.7	12.7	15,952	59	-1
65	Սերբիա	0.805	74.1	14.5	11.5	19,494	60	-5
67	Ղազախստան	0.802	69.5	14.8	12.4	22,587	65	-2
69	Բելառուս	0.801	73.2	14.0	12.2	18,425	65	-4
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ								
70	Բուլղարիա	0.799	71.5	13.9	11.4	25,921	70	0
74	Ալբանիա	0.789	76.8	14.5	10.1	15,293	74	0
76	*Հայաստան*	*0.786*	*73.4*	*14.4*	*11.3*	*15,388*	*79*	*3*

80	Բոսնիա և Հերցեգովինա	0.779	75.3	13.3	10.5	16,571	77	-3
83	Հյուսիսային Մակեդոնիա	0.765	73.9	13.0	10.2	16,396	82	-1
86	Մոլդովա	0.763	68.6	14.9	11.8	12,964	81	-5
89	Ադրբեջան	0.760	73.5	12.7	10.6	15,018	95	6
94	Թուրքմենստան	0.744	69.4	13.2	11.1	12,860	93	-1
100	Ուկրաինա	0.734	68.6	13.3	11.1	11,416	86	-14
106	Ուզբեկստան	0.727	71.7	12.0	11.9	8,056	105	-1
117	Ղրղզստան	0.701	70.5	13.0	12.0	4,782	116	-1
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ								
126	Տաջիկստան	0.679	71.3	10.9	11.3	4,807	125	-1

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: